Հունվարի 10, 2025

AMCA

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Լիլիթ Սիմոնյան
AMCA, ավագ իրավաբան

Հոդվածն անդրադառնում է պարտադիր հաշտարարության ինստիտուտին՝ քննարկելով դրա իրավական սահմանումները, կիրառման դեպքերը, հաշտարարի նշանակման ընթացակարգը և փոխհատուցման կարգը: Այն ներկայացնում է ՀՀ-ում պարտադիր հաշտարարության օրենսդրական հիմքերը և առանձնահատկությունները՝ մասնավորապես ընտանեկան իրավահարաբերությունների համատեքստում: Ներկայացվում են նաև հաշտարարի վարձատրության դրույքաչափերը և փոխհատուցման տրամադրման պայմանները:


«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Պարտադիր հաշտարարության հասկացությունը

Հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն:

Հաշտարարությունն իրականացվում է հաշտարարության կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հաշտարարությունը, որպես կանոն, կամավոր գործընթաց է և իրականացվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նշվածը սահմանված է «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածով, համաձայն որի՝ հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա: Սակայն այս ընդհանուր կանոնից կա բացառություն՝ պարտադիր հաշտարարություն, որը սահմանված է օրենքով, նախատեսված է որոշակի շրջանակի վեճերի դեպքում և պարտադիր է կողմերի համար:

Պարտադիր հաշտարարությունը վիճող կողմերին առաջադրվող օրենսդրական պահանջ է՝ նախքան դատարան դիմելը մասնակցել հաշտարարության: Ի տարբերություն կամավոր հաշտարարության, որի դեպքում կողմերն են ընտրում հաշտարարություն իրականացնելու ճանապարհը, պարտադիր հաշտարարության ինստիտուտը ստիպում է նրանց իրենց վեճը լուծել չեզոք երրորդ անձի՝ հաշտարարի միջոցով:

Օրենքի 11.1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ապա հաշտարարության մասնակիցները պարտավոր են մասնակցել հաշտարարությանը, լսել հաշտարարի կողմից ներկայացվող տեղեկատվությունը սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված հարցերի վերաբերյալ»:

Ո՞ր դեպքերում է կիրառվում պարտադիր հաշտարարություն

Օրենքը, նախատեսելով պարտադիր հաշտարարություն իրականացնելու պահանջ, առանձնացնում է նաև այն գործերի շրջանակը, որոնցով պարտադիր է հաշտարարության իրականացումը:

««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված 2022 թվականի նոյեմբերի 16-ին) 1-ին հոդվածը նախատեսում է Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով. «2.1. Ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի»: Նույն մասով սահմանվում են նաև այն դրույթները, որոնց վրա մեջբերված հոդվածը չի տարածվում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 56-րդ հոդվածի 3-րդ մասով, 57-րդ և 58-րդ, 60-րդ հոդվածներով, 61-րդ հոդվածի 3-րդ մասով, 62-րդ և 63-րդ, 66-րդ հոդվածներով սահմանված գործերի վրա:

Վերոգրյալ հոդվածից ակնհայտ է, որ օրենսդիրը սահմանել է գործերի հատուկ շրջանակ, որոնց դեպքում նախքան դատարան դիմելը կողմերը պետք է փորձեն վեճը լուծել հաշտարարության միջոցով: Այդ վեճերը հետևյալն են՝

1. ամուսնալուծություն,
2. երեխայի բնակության վայրի որոշում,
3. ալիմենտի բռնագանձում,
4. ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը համարվող գույքի բաժանում,
5. երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացում,
6. երեխայի տեսակցության կարգ սահմանելը,
7. ամուսնական պայմանագրի փոփոխում կամ լուծում:

Նշված վեճերից բացի ամուսնաընտանեկան այլ վեճերով հաշտարարության իրականացումը պարտադիր չէ:

Օրենքը սահմանելով պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, նախատեսել է նաև այն դեպքերը, երբ պարտադիր հաշտարարություն կարող է չիրականացվել:

Համաձայն ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված 2022 թվականի նոյեմբերի 16-ին) 1-ին հոդվածի 5-րդ մասի՝ «սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.
2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.
3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ»:

Անհրաժեշտ է նշել նաև, որ վերոգրյալ օրենքն ունի անցումային դրույթ, համաձայն որի՝ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ հոդվածի, 17-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներն ուժի մեջ են մտնում Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հաշտարարների հատուկ ցանկը առնվազն 15 արտոնագրված հաշտարարով համալրվելու դեպքում, բայց ոչ շուտ, քան պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով արդարադատության նախարարության կողմից համապատասխանաբար հաշտարար նշանակելու կամ դատարանին հաշտարարի թեկնածու առաջարկելու անհրաժեշտության դեպքում հաշտարարը նշանակվում կամ հաշտարարի թեկնածուն ընտրվում է հաշտարարների հատուկ ցանկից:

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտարարների ռեեստրում առանձնացվում և արդարադատության նախարարի սահմանած կայքում հրապարակվում է այն հաշտարարների ցանկը (առանձնացված ցանկը), որոնք

սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում արդարադատության նախարարություն պահանջագիր ներկայացվելու դեպքում կարող են նշանակվել հաշտարար:

Վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք ընդգծել, որ հաշտարարների ռեեստրում և արդարադատության նախարարի սահմանած կայքում հրապարակվում է ցանկ, որտեղ ներառված են այն հաշտարարները, ովքեր պարտադիր հաշտարարության մասին դրույթն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարության սահմանած դրույքաչափերով իրականացնելու են հաշտարարություն, իսկ պարտադիր հաշտարարության մասին դրույթն ուժի մեջ կմտնի նշված ցանկն առնվազն 15 հաշտարարներով համալրելուց հետո: Պետք է նաև նշել, որ սույն նյութը հրապարակելու օրվա դրությամբ՝ 2024 թվականի նոյեմբերի 26-ին, հաշտարարների վերոգրյալ ցանկը դեռևս հրապարակված չէ:

Պարտադիր հաշտարարության իրականացման դեպքում հաշտարարի նշանակման ընթացակարգը

Հաշտարարության վերաբերյալ համաձայնության մեջ ընտրված հաշտարարի կամ հաշտարարական հաստատության մասին տեղեկությունների բացակայության դեպքում հաշտարարը նշանակվում է արդարադատության նախարարության կողմից՝ կողմի դիմումի հիման վրա: Արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակումը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտարարի թեկնածուի ընտրությունը իրականացվում են էլեկտրոնային համակարգի միջոցով (Հաշտարարության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մաս): Հաշտարարի ընտրության և նշանակման կարգը սահմանվել է արդարադատության նախարարի որոշմամբ: Ըստ սահմանված կարգի՝ արդարադատության նախարարության կողմից օրենքով սահմանված դեպքերում հաշտարարի թեկնածուի ընտրությունը կատարվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով կատարվող վիճակահանությամբ:

Նախարարի սահմանած կարգը նախատեսում է կարգավորումներ ինչպես այն դեպքերի համար, երբ դատարանի որոշմամբ է նշանակվում հաշտարարություն, այնպես էլ այն դեպքերի համար, երբ կողմերն են դիմում հաշտարարի ընտրության համար: Այն դեպքում, երբ հաշտարարի ընտրությունը պետք է կատարվի պարտադիր հաշտարարության շրջանակներում, հաշտարարը նշանակվում է հաշտարարների հատուկ առանձնացված ցանկից (Ցանկ 2), իսկ մնացած

դեպքերում հաշտարարի թեկնածուն ընտրվում է հաշտարարների ընդհանուր ցանկից (Ցանկ 1):

Պարտադիր հաշտարարության իրականացման հետ կապված ծախսերը և դրանց փոխհատուցման կարգը

«Պարտադիր հաշտարարության կամ դատարանի նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակվելու դեպքերում հաշտարարության իրականացման համար հաշտարարի վարձատրության դրույքաչափը սահմանելու, մինչև երկու ժամ տևողությամբ իրականացված հաշտարարության դիմաց հաշտարարի վարձատրության գումարի վճարման համար հայցվորին պետական բյուջեից վճարման ենթակա փոխհատուցման չափը և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 804-Ն որոշմամբ սահմանվում է օրենքով մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև երկու ժամ տևողությամբ հաշտարարության իրականացման համար, ինչպես նաև դատարանի նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակվելու դեպքում՝ դատարանի որոշմամբ սահմանված ժամանակահատվածի համար հաշտարարի վարձատրության դրույքաչափերը, հաշտարարի վարձատրության գումարի վճարման համար հայցվորին պետական բյուջեից վճարման ենթակա փոխհատուցման չափը և կարգը:

Վերոնշյալ որոշմամբ օրենքով մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև երկու ժամ տևողությամբ հաշտարարության իրականացման համար սահմանվում է հաշտարարի վարձատրության հետևյալ դրույքաչափերը՝

1) մինչև մեկ ժամ իրականացված հաշտարարության դիմաց՝ 10.000 դրամի չափով.

2) մեկ ժամը գերազանցող յուրաքանչյուր 30 րոպեի համար՝ ևս 5.000 դրամի չափով:

Նշվածից կարող ենք եզրակացնել, որ պարտադիր հաշտարարության իրականացման դեպքում փոխհատուցման ենթակա է 2 ժամ տևողության համար հաշվարկված 20.000 ՀՀ դրամը: Եթե հաշտարարությունը տևել է 2 ժամից ավել, 2 ժամից ավել իրականացված հաշտարարության համար փոխհատուցում չի տրամադրվելու:

Նույն որոշմամբ սահմանվում է վերոնշյալ փոխհատուցման տրամադրման կարգը ու ժամկետները, համաձայն որի՝ հայցվորին մինչև երկու ժամ տևողությամբ

իրականացված հաշտարարության դիմաց հաշտարարի վարձատրության գումարի վճարման համար պետական բյուջեից փոխհատուցում վճարվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, իրականացվել է պարտադիր հաշտարարություն, որը չի ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ և կազմվել է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն.

2) պարտադիր հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան ներկայացվել է հայցադիմում.

3) հայցը մերժվել է կամ մասնակի է բավարարվել.

4) հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն:

Վերոթվարկված պայմաններից թեկուզ մեկի բացակայության դեպքում պարտադիր հաշտարարության դիմաց փոխհատուցում չի տրամադրվի: Այսինքն՝ ցանկացած դեպքում, երբ կկնքվի հաշտության համաձայնություն կամ պարտադիր հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան հայցադիմում չներկայացվի կամ հայցը բավարարվի (կամ գործի վարույթը կարճվի) կամ հայցվորն ազատված չլինի պետական տուրքի վճարումից, հաշտարարաի վարձատրության համար պետական բյուջեից փոխհատուցում չի տրամադրվելու:

Հայցվորին պետական բյուջեից փոխհատուցումը կվճարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ հայցվորի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացված դիմումի հիման վրա: